АДМИНИСТРАЦИЯ МЯСНИКОВСКОГО РАЙОНА

# ПОСТАНОВЛЕНИЕ

15.05.2014 г. № 693 с. Чалтырь

**Об утверждении тарифов на платные медицинские услуги, оказываемые МБУЗ МР "ЦРБ" на возмездной основе**

В соответствии с п. п. 4 и п. 4 ст. 17 Федерального закона от 06.10.2003 № 131-ФЗ "Об общих принципах организации местного самоуправления в Российской Федерации", Постановлением Правительства РФ от 04.10.2012 № 1006 "Об утверждении Правил предоставления медицинскими организациями платных медицинских услуг", Администрация Мясниковского района постановляет:

1. Утвердить тарифы на платные медицинские услуги, оказываемые МБУЗ МР "ЦРБ" на возмездной основе за счет личных средств граждан, юридических лиц и иных средств на основании договоров, в том числе договоров добровольного медицинского страхования, согласно приложению.

2. Постановление вступает в силу со дня официального опубликования в районной газете "Заря".

3. Контроль за выполнением постановления возложить на заместителя главы Администрации района Н. С. Кешишян.

**Глава района А. М. ПОРКШЕЯН.**

*(С приложением к постановлению можно ознакомиться на официальном сайте Администрации Мясниковского района: www.amrro.ru)*

# ԱՆԿՈՏՐՈՒՄ ԿԱՄՔԻ ՏԵՐ ԳՐՈՂԸ

## ԼՐԱՆՈՒՄ Է ՎԱԼՏԵՐ ԱՐԱՄՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 105-ԱՄՅԱԿԸ

Ճանաչված արձակագիր, թարգմանիչ Վալտեր Արամյանը ծնվել է 1909 թվականին, Վաղարշապատում: Սովորել է տեղի միջնակարգ դպրոցում, որն ավարտելուց հետո սկզբում աշխատել է ուսուցիչ, հետո քաղլուսկոմի նախագահ: Ավարտել է Երևանի համալսարանի լեզվագրական ֆակուլտետը: Աշխատել է Մատենադարանում որպես կրտսեր գիտաշխատող:

1931 թվականին Վ. Արամյանը ձերբակալվել է, մեղադրվել տրոցկիզմի մեջ, բանտարկվել: Դրանից հետո զրկվել է աշխատելու իրավունքից, մինչև 1937 թվականը անունը եղել է գործազուրկների ցուցակում: 1938-ին նորից է ձերբակալվել, աքսորվել է Կալիմա կալանավորման ճամբարը: Աշխատել է ոսկու հանքերում որպես հանքափոր:

1954-ին Կալիմայից վերադարձել է կնոջ և երկու երեխաների հետ:

1955-ին լույս տեսավ Վալտեր Արամյանի առաջին գիրքը՝ "Տայգայի օրերը" խորագրով: Այնուհետև տպագրվեցին "Մարդը" (1959), "Մարդու սերը" (1962), "Ընկած ծառը" (1964), "Մի՞թե բոլորը հող դարձան" (1970) "Ռուսա, որդի Արգիշտի" (1970) "Վերադարձ" (1982) և այլ ստեղծագործություններ: Նրա "Տայգայի օրերը" և "Ռուսա, որդի Արգիշտի" գործերը թարգմանվել և առանձին գրքով լույս են տեսել ռուսերեն:

Բարի համբավ ունի ժողովրդի կողմից սիրված ու ճանաչված գրողը, քանի որ բարության սերմեր է ցանել ամենուրեք:

ՄԱՄՈՒԼԸ Վ. ԱՐԱՄՅԱՆԻ ՄԱՍԻՆ

...Նրա հայրը աշտարակցի էր, իսկ մայրը՝ վաղարշապատցի, հայ գրականության դասական Հովհաննես Հովհաննիսյանի հորեղբոր աղջիկը, որ մեծացել էր բանաստեղծի միջավայրում, տեսել էր Կոմիտասին ու երգել նրա երգչախմբում: Մայրը իր բարությունը փոխանցել էր որդիներին, այդ թվում և ապագա գրող Վալտեր Արամյանին:

Հետևում են Վ. Արամյանի ուսման տարիները նախ դպրոցում, ապա Երևանի պետհամալսարանի գրական ֆակուլտետում, ուր նրա դասախոսներն էին Մ. Աբեղյանը, Գր. Ղափանցյանը, Ա. Տերտերյանը և ուրիշներ: Նրանց ազդեցությունը և հետագա ծանոթությունը Ավ. Իսահակյանի, Մ. Սարյանի և ուրիշ մեծերի հետ ձևավորեցին Վ. Արամյանի նախասիրությունները:

Այնուհետև եղան դժվարին տարիներ: Նա ճակատագրի բերումով ապրեց հեռավոր հյուսիսում: Կենսափորձը, սեփական աչքերով տեսածը եղավ նրա ստեղծագործության բուն աղբյուրը: Իր "Տայգայի օրերը" գրքում հառնում էր հեռավոր հյուսիսի կյանքը: Սովորաբար հյուսիսը մռայլ է, անհյուրընկալ, հավերժական ձյունով ու սառույցով ծածկված: Բայց Վ. Արամյանը այդ մռայլության և սառնության մեջ տեսնում է հյուսիսի հրապույրները, նրա մարդկանց տաք սիրտը, բարությունն ու ուժեղությունը: Այդ գրքից կարելի է առնել բարության դասեր, որոնք սովորեցնում են ապրել բարդ ու դժվարին իրադրության մեջ: Մարդը լցված է այդ դժվարին իրադրության մեջ անսահման սիրով ու հավատով: Գրողը այդ պահին չի լքում իր կենսահաստատ բնավորությունը: Ահա այդ մարդկային լուսավոր գիծն է անցնում Արամյանի հյուսիսային պատմվածքներում, որոնք ունեն նաև իմացական արժեք:

Մարդիկ, սովորական մարդիկ... ահա թե ովքեր են նրա հերոսները: Նա ձգտում է մտերիմ լինել, հասկանալ մարդկանց ցավերն ու հոգսերը, ցավում է մարդկանց համար, որ կային և հիմա չկան:

Վալտեր Արամյանի վերջին գրքերից մեկը կոչվում է "Վերադարձ", դա խորհրդանշական է, որովհետև հեղինակը վերադառնում է դեպի իր նախասիրությունները և, շարունակելով ու խորացնելով դրանք, գտնում նաև մի խոր թեմա՝ Երևանը, որի մասին է խոսում ու խորհրդածում գրողը:

Վ. Արամյանի պատմվածքները կյանքից են գալիս, կյանքում կատարված դեպքեր ու երևույթներ են, որ գրողը ենթարկում է գեղարվեստական ընդհանրացման: Նա կարողանում է ընթերցողին կապել իր ստեղծած այդ ուրույն միջավայրին: Նա վերականգնում է գեղեցիկ պատմություններ անցյալից, մարդկանց հպարտության, գեղեցիկ սիրո մասին:

*"Երեկոյան Երևան", 1986, 15 ապրիլի*

# Հավերուն մեծայինքըս կերան

*(ԵՂԵԼՈՒԹՅՈՒՆ ԹՈՓԹԻԻ ԽՈՍՎԱԾՔՈՎ)*

*Խաթի քըսիրին թոռներըս լսել առաչվան բաները պատմածըս: Ասօր ալ կուզին լսել վայնային քենվան նեմցեներուն մեր գեղը էկածներուն մասին: Խոսքերեն չելլա, բաշլայեցի պատմելու.*

Ամառ էր ... 1942 թ.: Եփոր նեմցեն մեր գեղին մոտկըցավ, բաշլայից բամբիթ անելու նը, մինք սաղ սեմյայով գովերուս գլոխեն ալ բռնեցինք, էլլանք Մեծ Սալա գնացինք: Հեսաբ արինք, որ հոն մեկի անքան վտանգավոր ըլալու չէ: Մեմը դուն ան նայե, որ հոն մեր գեղեն ալ ավելի վտանգավոր էղավ: Ինչ էրկունցունում էկան նեմցեները գեղերը լցվեցան: Մինք ալ ի՞նչ անինք՝ որոշեցինք կենե նորեն մեր գեղը քալ: Մեր գեղն ալ էկանք նը, կենե աղպես իլինք նեմցեներ էկած լցված էին: Կովերուս գլոխեն բռնած ապբար մտանք: Գեղը ալայ յոռոխը նեմցեյի սալդաթներ, խոշոր մաշիններով կայնած էին: Դիրացիններուս ապբարն ալ քանի հատ արբա կայնեցուցած, բարչային մեչն ալ՝ էշաքի լմանած, մեծ անկաջներով, էշաքե մեծ հայվաններ ծառերուն կապած էին (Պապիներըս ադ հայվաններուն՝ խոտռ կասեյին): Աղպես տրանսպորտներով ալ էկած կային: Ադ հայվանները բարչայի ծառերուն կճեղները թեմիկ կոծեցին, չիպլախ արին: Նացամեն էտեվ դիրացիններուս բարչայի ծառերը թեմիկ չորցան: Խաթի ըռինդ, տեսոք բարչա ունեյին:

Մինք ալ մտանք տուներըս տեղավորցանք... Նեմցեներուն մեկը, կովին ապբարը կապած տեսածովը, կատելոկը ձեռքը բռնած մտավ ապբարը՝ "մոլոկո մոլոկո",- ասելեն: Դըհա կովին կթվելու ժամանակն ալ չէր, մամայիս պոռով կովին կթելու տուվից, առավ կաթը գնաց: Ադ օրը անցավ աղպես: Մեմալում օրը էլլանք մամայիս հետ մեծայիս տունը գնացինք՝ նացա հալերը իմանալու: Նաքայա մեկի ադ քշերը ինչես անցուցածները պատմեցին :

Ծինը մեծաս բաշլայից պատմելու ադ օրվան քշերվան էղած բաները:

- Հոքիս, դուսը հորսակ էր՝ կընայիս մեքատ նեմցե, էրկվատ հավ ձեռքը բռնած (որին հավերն ին, ո՞վ գիդնա), բերիլ է պապիյիդ՝ "կուռը-կուռը" ասելեն, ձեռքերով, շմարքներով ինչ անելուն քցուցունե: Կույե ասել քի՝ մոշթել, էփել պետք է ադ հավերուն, վերչը ինքը էտեվեն պիտ գա, պիտ առնե: Տուվից նեմցեն հավերը պապիյիդ ձեռքը, ինքն ալ գնաց: Մոշթից պապիդ հավերուն՝ ես ալ թեմուսցուցի, էփեցի: Նեմցեյին էկածին ջանփան կընայինք:

Անցավ նոմայ ժամանակ, դուսը մթնեցավ: Պապիդ կընայե, կընայե նեմցեն չիքա նը, կանչից ինձի... "Հաքա, մեմա քալու չէ նավեռնո իդա նեմցեն, դուսը քշեր կըլա հայա, դիր դրաբեկը, ուտինք իդա հավերուն, մեմը գշտանանք",- ասաց:

Էնջամըս դրի ադ հավերուն դրաբեկին վրան, նստանք, շատողեմիշ արինք, խունդումով կերանք գշտացանք:

Չիտիմ ինչքան ժամանակ անցիլ էր, դուսը մութ է: Մեմ ալ ի՞նչ կընայիս՝ ալղը նեմցեն, մեքատա օֆիցեռ հետը էկան:

"Կուռը, կուռը դավայ",- կասե պապիյիդ: Պապիյիդ լիպուն բերանը կապվեցավ: "Աս էր բանը, ի՞նչ ասիմ սիվոնց սաշինը",- կասե: Էղըլ է նեմցեն՝ ադ հավերուն օֆիցեռին դեյեն՝ էփելու բերած էղիլ է: Ծինը ի՞նչ թող անե, ի՞նչ թող ասե, հավերուն կերած ինք ախռ: Էնջամըս՝ իդա տեղը ես մեչ կըմուտնում՝ "Կուռի, կուռի, հավ, հավ հապ, սաբակը ուկռալ",- կասիմ իմիս վարքիս քըհասկուցունում, որ շուները հավերուն տարիլ ին: Նեմցեն քանի չեշիտով իրենց վարքի պապիյիդ ոտքեն գլոխը հայհոյանքներով կընեղանա: Չիտիմ իմիս ասած բանիս նեմցեն հավատաց, չիհավատաց: Նեղութինով ապատածին հոժար է աշտըխ պապիդ: Համա օֆիցեռը, պապիյիդ վրան կանչելեն, հետը նես տարավ: "Սա բանը իդա հավերուն տեղը գլոխըս բան պիտ բերե ալլեմը",- կասե պապիդա: Քշեր էղավ, պապիդ նեմցեներուն հետ վերի տունն է, մինք ալ մաղապին մտած ինք: Մեծ ալ կընայիս՝ մեկ չորս հատըմ նեմցե դըհա էկան, նես մտան: Էղիլ է, ադիվոնք ադ օֆիցեռին օխռանիկներն ին:

Նեմցեները նեսը ուրիշ մաշդ չին ապուլտա: Մինք բաշլայեցինք պապիյիդ խասեվեթը անելու: "Իդա հավերուն համար մաշդուն գլոխը բան չբերեյին նը",- կասինք: Սաղ քշերը խասեվեթով ջորով լուսացուցինք:

Մեծ ալ կընայիս՝ ադ նեմցեները սաբախտան կանոխ արտորալեն նստան մաշինները, գնացին (նավեռնո տռեվոգա էր ինչ էր՝ որ մահը գիտե): Պապիդ էր՝ քըֆելեն էտեվներեն հոքան էլլած նեսեն դուս էլլավ: Մինք եփոր պապիյիդ սաղ, սելամեթ տեսանք նը, խունդումով դիմացը կըվափինք, ինչես քշերը անցուցածը քըհարցունունք: Պապիդ ադ քշերը ինչերով լուսացուցիլ է:

Ադ օֆիցեռը պապիյիդ գլոխին ինչեր բերածը շինը պապիդ թող պատմե, դուք ալ լսեցեք,- ասաց մեծաս:

Պապիս բաշլայից շարունակել ադ քշերվան պատմութինը:

"Ալղը օֆիցեռը հանվեցավ, տուռուսիկով էղավ՝ բաշլայից իրեն լիպույով, շմարքներով, սըթեմներով՝ քըհասկուցունե, որ ուպեցածը գամով չակուճկ է, ինքն ալ քըցուցունե խոշոր գամեր պետք էղածը: Ադ բաները ջեմ արի, չակուճկը, գամերը կերկունցունում, չառնու: Ինձի քըցուցունե ադ գամերը վըտեխ գամելուս: Մեկը տունին մեկալ կոմնատը անցնելու շեմին վրան գամել տուվից, մեկելն ալ՝ նես մտած շեմին վրան: Անկից հանից մեքատ դոբռայի մեչե մեծ սետկա, կապել տուվից ադ գամերեն: Մեծ ալ կընայիմ՝ էլլավ պառկեցավ ադ սետկային մեչը, ինքն ալ՝ "Կաճա՜յ",- կըկանչե: Իդա խոսքն ալ վըտեխեն սորվիլ է իդաքան դեղանակ): Բաշլայեցի օրելու երեխա օրածի պես: "Ախռ ես ալ մաշդ իմ, իմիսն ալ քունըս կըտանե՝ քիչիմը թարթմիշ էղա, օրելըս կամացուցի, կենե "Կաճա՜յ" կըկանչե: Քշերը աղպես տանջանքով ջորով լուսացուցի շտե: Նարա հավինն ալ հերը անիծիմ, ալայ բանինն ալ",- ասաց պապիս, վերչացուց պատմութինը:

Ասպես բաներ ալ էղան ադ նեմցեներուն էկած տարիներուն: Աս անգամ ասքանը կոկտե, հայդը բալաներըս, անցիք ձեր գործերուն,- ասի, վերչացուցի ասօրվան պատմութինըս:

Ս. ՍԱՄԱՆՅԱՆ
գ. Թոփթի